

ԵՐԵՎԱՆԻ Ի ԿԱՄԻՓ

ՈՒՂԵՆՈՐՈՒԹԻՒՆ

ԳԱՐԼԱ ՍԵՐԵՆԱ ՏԻԿՆՈՋ

(Հրատարակեալ 'ի Tour du Monde օրագրի) :

Կովկասու աշխարհագրիտութիւնս ,
արդէն ուրիշ տեղ զրուցած եմ , սկսեր
էի յամին 1876-1877 , ընդ հովանա-
ւորութեամբ Միքայէլ մեծ-դքսին , եղ-
բօր Աղեքսանդրի Բ՛ կայսեր , որ այս
ժամանակ երկրին փոխարքայ էր : Ազ-
նիւ կերպով զիս ընդունելէն յետոյ ,
նաև հաճեցաւ յանձնել զիս առ իշխա-
նուհին Դաւիթ ճալճաւայէ 'ի Կա-
խէթ : Նա ինձ կը սպասէր , երբ տնակն-
կալ պարագայք իմ ճանապարհացու-
ցակս փոխելու հարկադրեցին զիս , և
հազիւ տարի մը վերջը կրցայ իր սիրա-
լիր հրաւիրանաց համապատասխանել :
Ապա պատերազմի ձայներ տարածուե-
լով , որոնք որ աւելի խռոված էին , կը
բռնադատէին զիս վերադառնալ յերւ-
պա : Չոր չկատարեցի . որովհետև մա-
նալ մ'էր կովկասու դաւառը՝ ուր ա-
մենագուարթ կ'անցնի կեանքն , եթէ
թողուի այս արեւելեան երկիրս առանց
տեսնելու զԿախէթ : Ամեն տեսակ զօ-
րաւոր պատճառք զիս կը հրաւիրէին
այն դաւառին այդ ելլելու , ուր որթք՝
անկազարծեալք 'ի Նոյոյ , այնչափ բազ-
մածիլ բողբոջներ տուած են , և ուր կը
բնակի սիրելի և հիւրասէր ժողովուրդ-
մը : Կ'ըսէին ինձ նաև , եթէ երկիրն
չատ գեղեցիկ է . այս բանս բաւական
եղաւ հօն տեղ երթալս որոշելու : Այս
'ի բնութենէ օրհնուած զարմանալի
երկրիս մէջ՝ երբք ամիս կենալու բարե-
բազդութիւնն ունեցած եմ :

Երբ յամին 1881 նոյեմբերի մէջ ,
երկրորդ անգամ դարձայ 'ի կովկաս ,
միանգամայն և իբր լուսանկարիչ , զնա-

ցի ևս 'ի Կախէթ , երկրին տեսարանքը
և տեղացւոց դէմքը հանելու համար ,
որոնք իմ նկարագրութիւնքս պատկե-
րազարդելու հարկաւոր էին : Այն ա-
տեն շատ կարճատև եղաւ այցելութիւնս :
Հազիւ թէ երեք օր կրցայ կենալ , ու-
զիրով օգտուիլ լոյս Աւստրո-Հունգա-
րացի նաւէն , որ յերոպա մեկնելու
վրայ էր : Թէպէտ և ճանապարհորդու-
թիւնս արեւելեան և ճանապարհորդու-
թիւնս իսկ ուղևորելով , սակայն նպատա-
կիս կրցայ հասնիլ :

Էս ահա այս երկու ուղևորութեանցս
արդիւնքն են , զոր կ'ընծայեմ Tour du
Monde օրագրի :



Ի Տիփսիս 'ի Սիւնիս . - Թորոտարի կոչա-
րանք և գիւրք ճանապարհին . - Գժոտարին
անցք . - Սյունիս քաղաքն և իւր յնակիւք . -
Կոստանի զինիք . - Սյունիս շուկայի անհրաժեշտ
մեծատուն . - Հայ խորանիք մը . - Թու-
մար բողբոջնոց յիշատակք :

Ա.

Յունուարի մէջ 1877ին գեղեցիկ ա-
ռաւօտ մը միայնակ ճամբայ ելայ դէպ
'ի Կախէթ . ճանապարհորդութիւնը քե-
րեքլատնուայոյով (թղթատարական
կառք) մ'ըրի :

Մեսսաժրերեայց պանդոկէն , որ այժ-
մեան Տիփսիսի մտից քովն է , չքեց թա-
ղից միջէն կը հասնիս Կուրի կամուրջը .
յետոյ դործաւորաց արուարձանաց մի-

ջէն կ'անցնիս, որոնք քաղաքին միւս
 ժայրերն են, ուր ամեն տեսակ շուկայք
 և վաճառատեղիք կը գտնուին: Կ'արժէ
 որ մասնաւոր յիշատակութիւն մ'ընեն՝
 գինոյ վաճառատեղոյն վրայ, որ իրեն
 համար երկու առանձին տեղեր ունի:
 Ելրեակայեցէք տիկերու բազմութիւն
 մը, ոմանք գետնի վրայ դրած, ոմանք
 ալ եզներով և կամ կաշմբուռն գո-
 մէշներով լծուած սայլերու (արսապա)
 մէջ դիզած: Այս ուսուցեալ և հաշ-
 գին տիկերուս, որք պահած են այն
 կենդանեաց ձևը՝ որոնց կմտխբը կը
 պատէին երբեմն, հետուէն նայելով՝ կը
 կարծես թէ արջաք ըլլան: Հօս է՝ որ
 մայրաքաղաքին և շրջակայ տեղեաց
 տառապաններու՝ տեսարն կու գան և կու
 խէթի գեղայիններէն իրենց միահամուռ
 բազմութեամբ վաճառքը Լը դնեն:

Աւելի հետու, կը հասնինք բարձր
 տեղ մը, ուր կ'ամբառնայ Ձինարանն,
 ընդարձակ և բոլորովին նոր շինողու-
 թիւն մը, հին բերդին անմիջապէս դի-
 մացը, որ այնչափ տկար կերպով պաշտ-
 պանեց ճիփխիս՝ իսլամի հետևողաց թէ
 Պարսից, թէ Լեզկիներու և Տաճկաց
 նորանոր յարձակմանց դէմ: Այս զօ-
 րանոցիս մէջ արտաքոյ կարգի աշխոյժ
 մը կը տիրէր անցած ժամանակս: Ձի-
 նուորանոցաց շորս կողմը ուրիշ բան
 չէր տեսներ, բայց եթէ զինուորնեք՝
 որոնք ՚ի ձեռին հրադանի խուրձս և
 ուզմամբերս կը կրէին. ամենայն ինչ
 կը յայտնէր որ Արէսի գործարանն դա-
 տարկ չէր միացած: Այս բարձրութենէս՝
 քաղաքն իր ամբողջութեան մէջ շատ
 գեղանկար տեսարան մը կ'ընծայէ, ուր
 թէպէտ եւրոպական շինուածն ջանա-
 ցած է սպրդելու, տակաւին ափական
 ճարտարապետութիւնն կը յայլմանա-
 կէ: Պատկերին յայտարար նշանակիչ
 մասն՝ գալարութենէ բլրարովին զուրկ
 ըլլալն է. Տիփխիս ամեն կողմանէ քա-
 րուս ժայռերով և լեռի լեաներով շր-

ջապատած է, դալարոյ մի միայն կէտն
 զոր մենք տեսնուք՝ հետաւոր ձորոյն ա-
 կուն է, ուրանոր կուր գետն կ'ընթանայ:
 Անտի կախէթի ճանապարհն կ'եր-
 կայնի միօրինակ խոպանացեալ դաշ-
 տավայրից միջէն, որք աչքդ զօրելուն
 չափ կը տարածուին, ուր ճամբուն մեծ
 մասին վրայ բնակութեան հետք չի տես-
 նուիր: Միայն մերթ ընդ մերթ ստոր-
 երկրեայ խոռոչէ մը կ'ենէ թաւամնդ
 բան մը, զոր նախ շիկերէի մը գլուխ
 կը կարծես, բայց լաւ ևս նկատելով
 կ'որոշես որ փութախ (տետակ մը ոչ-
 խորի մարթէ գլխարկ) դրած մարդ-
 կային գլուխ մ'է: Կ'ըսեն թէ հիւսի-
 սային հողոյն բռնութիւնն է՝ որ սափ-
 պած է այդ սխրաստեալի դաշտաց դե-
 ղացիքը՝ այսպէս հին Անձուաբնակաց
 պէս պարելու, որ և է չէնք չկարենա-
 ըով երկրին երեսը հողմոյն դէմ տակալ:
 Երկիրը գրեթէ անապատ է, միայն ա-
 մառը կը կենդանանայ: Շատ մը իշ-
 խամք, այգեստանեաց տեսքք, միայն
 ձեռն ատեն Տիփխիս կ'իջնեն իրենց լա-
 ւադոյն բերքը վայելելու համար, զոր
 բնու վտանուել չեն ուզեր: Մտկայն առ
 զիս անդին կը հանդիպին շինականաց
 խումբերու, որոնք մայրաքաղաքը կ'եր-
 թան. ասոնք են յայլ և այլ դաւառաց ժո-
 ղովեալ ինքնակամ յազդային զինուո-
 րութիւն գնացողք են: Բայց սակայն
 այս ինքնակամ զինուորեալք ըսուած
 ներն, ճամբուն մեծ մասը հայհոյելով
 կ'անցնեն. և որպէս զի յանկարծ մըտ-
 քերնին շինկնայ ետ դառնալ, հետեր-
 նին ձիաւոր ջախառներ կը զրկեն: Այս
 ջախառներուն (թաթար բառ մ'է որ
 ուղեյից կը նշանակէ) միջոցով է, որ
 կովկասու թղթատարական ճամբանե-
 րու վրայ կատարեալ թապահոլութիւն
 կը տիրէ. ամեն կայարանի մաս այս
 պահապանաց հինգէն ինչուան երկու
 տասան անձանց տեղ մը կայ. իւրա-
 քանչիւր կայարան իրենները կը հայթ-
 հայթ է:

Երբեմն ալ տիկերով բարձած արա-
 պայի մը կը հանդիպիս, որոնց՝ կառ-
 քին երէկը տեսակ մը կենդանութեան

1 Տարած կը կոչուի այն տեղն՝ ուր գինի և կե-
 րակուր կը վաճառեն, ոմանց մէջ ալ կրնայ ի-
 շխանակել:

չարժու՞մ կու տայ ոգիտրեալ էտկի մը նչյառութիանն նման : Նոյեմբերի և դեկտեմբերի մէջ է՝ որ կը սարուի ՚ի Տրփխիս տարեկան գինւոյ բերքն . այն ժաւանակ, կ'ըսեն թէ ամեն օր երկու հարիւր և աւելի տիկը կ'անցնին ճամբէն, իւրաքանչիւրն սովորաբար հինգ կամ վեց հարիւր լիտր բովանդակելով, որ ըսել է Պորտոյի տակառայ կրկին քանակութիւն մը :

Ընդ մէջ Տփխիսի և Սոնախի, որ այս ուղղութեան վրայ կախէթական առաջին քաղաքն է, գրեթէ հարիւր վերստի հեռաւորութիւն մը կայ : Պէտք է զրուցել որ կայարանը բաւական բազմաթիւ են, և յաճախ ալ առիթ ունին լեւուսաւարիդելի մը կամ թղթատարական կայարանի գլխաւորի մը բերնէն, որ ընդհանրապէս գինով մ'է, այս ծանօթ վերջաբանը, « Զի չկայ » : Այս ալ ստոյգ է, որ բաւական է քաջութիւն ցուցնես՝ գիմանջ երկցընկու համար զոյգ մը խեղճ գրաստայ, աւելի խարազանի հարուածովք . քան թէ գարիով սնած, որոնց տեղը կը հաւաստեն ամենայայտնի կերպով՝ կով, առու կոյաբանայ ընդհանուր տեսչին խորին անհոգութիւնը : Սակայն կայարանը ըստ պատշաճի են : Օրկէֆ, վազիանէ, ինչպէս բոլոր այս գծին վրայ գտնուածներն, մէյմէկ զարշահու լողիկը են, ուր եթէ բռնազատուի ճամբօրդ մը իր ձախորդ բաղդէն հանդիլու, իրաւքընէ ցաւակցութեան արժանի է :

Ի 1881ին Օրկէֆի կայարանէն անցած ատենս, (որ առաջինն է երբ Տփխիսէն կ'երթաս), պաշտօնեայք իրենց նըշանադրեստով գիմուցս երան . ունւորիդելն իմ հասնելուս ժամանակ՝ ը կառավարաց և ձիադարման սպասաւորաց նոր զգեստերնին հագցընել աուեր էր . անտարակոյս ինձի պատիւ ընել ուզեր էր, որպէս զի տեսչին տայիք

տեղեկութիւնքս իրեն ՚ի նպաստ ըլլային՝, և կ'երեսար թէ պատուէրն ճամբուն վրայ արուած էր, որովհետեւ ՚ի վազիանէ, յաջորդ կայարանը, այն մարգրիկն որոնք ինձի օգնեցին բնիկըլասնայուն փոխելու, փոխանակ պատառատուն լուխաներու, երկայն և լայն պատմուճաններ ունէին շատ աղէկ վիճակի մէջ, և հասակին համեմատ վեր ամիսփուտած էր լայն և կարմիր կերպասէ գտաւով մը : Զարգարուն ծոպաձև փուփախներ գրած էին զուխնին, մետաղէ թիթեղով մը, որու վրայ կտր կոյսերական թիւն և արծիւն : Այսպէս յարգութեամբ վարուեցան հետս, քովս զանուած ձեռագրին զօրութեամբ :

Ուղեորութեանս միակ կէտն, որու վրայ աքն հաճութեամբ կը հանդչի, Մարիէնֆէլտ գերմանացի բողոքական գաղթականութիւն մ'է, Տփխիսէն գրեթէ քառասուն վերստ անդին : Այն տեսչի գեղեցիկէն և մաքուր պահուած առուքն, ապակեայ և սպիտակ պատահանք վարագուրք պնենայ, եւրոպական քաղաքիկի մը տեսիլը կ'ընծային : Գեղեցիկ եկեղեցի մը զիւզին վրայ կ'իշխէ :

Կանգ առի լուսանկարը հանելու համար : Զորս կողմս ժողովեցան՝ բնակիչքըն, ընծայեցին ինձի զինի և պտուղ : Ատնք թէպէտ և ՚ի կովկաս ծնած են, սակայն մէլիքնին սակաք ուստերէն կը խօսին : Շատ ուրախացան ինձի հետ գերմաներէն խօսել կարենալնուն համար, որ քիչ անգամ կը պատահի իրենց՝ օտարականաց անցնելուն ժամանակ :

Այս գաղթականութիւնս, ինչպէս ուրիշ երկուք ես, որ մերձակայ տեղուանք կը գտնուին, բնկէբասօրֆ և Ֆրէժօտէնթալ, 1830ին ատեններն հաստատուեցան ուխտաւորաց խմբէ մը, մեծաւ մասամբ վերաբէմայերկցի, որոնք իրենց

1 Ինչպէս առաջ գրուցեցի, կովկասու իշխանութիւնն ամեն կերպով գիւրընցուց ուղեորութիւնս : Ի 1881 նոյեմբերի մէջ, թղթատարական ծառայութեանը վերատեսուէն ձեռագիրք մը յանձնեց ինձ, որու զօրութեամբ ամեն կա-

յարանաց մաս ձեւերը պատրաստ պիտի գտնէի : Զ ի 1881ին նոյեմբերի մէջ անցնելու ժամանակս, լուսադոյն գրից մէջ դասայ թղթատարական ծառայութիւնը ընդ վերահացութեամբ գրեւ զապէտի . . . որ այս պաշտօնիս նոր գրուած էր :

հայրենիքէն ելան՝ յերուսաղէմ երթալու գիտամար: Բայց ՚ի վրաստան կանգ առին, ուր աէրուժիւնն իրենց երկիրներ սուաւ, այսպիսի կերպով խրախուսելով ափ մը երկրագործ և աշխատասէր ժողովրդեան հաստատութիւնը աշխարհին մէջ: Ուրիշ գաղթականիք առաջնոց հետեւեցան. այնպէս որ այսօրուան օրս հովկասի մէջ զրեթէ տասն գերմանական գաղթականութիւնք կը համրուին, յորոց ոմանք շատ յառաջագէմ են և ամենքն ուլ գպրոցներ ունին: Արպիսի դիմապատկեր այս փոքր բայց յարգարուն և կոկիկ կեդրոններու՝ և այն գարշատեսիլ խղիկներու մէջ, ուր տեղաջիք կը վիստան:

Մարիէնֆէշտ գեղէն սակաւ հեռու կը գտնուի Ազամպուրի կայարանը, համանուն գեղջ համապատասխանող. այս վերջնոցս բնակիչքն Մալաբան ռուս ազանգաւորք են, որթողքս բողբաղահասց տեսակ մը, որ Գերմանիոյ և Լեհաստանի Լուտերական աղանդներէն ծագումն ունեցած են: Ասոնք՝ կրնանք բնի՛ տեսակ մը ռուս Մորաւեան եղբարք են, սակայն այս գանազանութեամբ՝ որ չեն ճանչնար վերջնոց պէս, ոչ եկեղեցի, ոչ քահանայ, և ոչ խորհուրդ: Այս կայարանս ալ զգուշի սրջ մէ, ծեր դինովի մը ձեռք սնցած, մուրեղիւն յիմարուքե՛ւ: Բռնուելու վրայ լեօր գետակն, որ Ալազան գետը կը թափի, այս սահմանս կ'ընթանայ. ստիք կ'անցուի: Անոր և կուրայ մէջ եղած ընդարձակ տարածութեամբ երկիրն՝ կատարեալ անապատ մէ, անբնակիլ ջրոյ պակասութեան համար: Իրբնմն աւելի նուազ անբեր երկիրներու մէջ կը բնակէին փշաւք և Մոլիւլեղք ազգերն: Քիչ մ'ալ հեռու կը հասնինք Մուղանլու կայարանը, թաթարաց բնակութիւն, որոյ արուեստն աւազակութիւն է: Այս խոպաններս՝ որոնք ձմեռատեն շրջակայ լեռնակիանց ճարակ կը պատրաստեն, ֆարայս ըսուած դաշտը կը կազմեն, որ ատենաք ֆումպէշովանի (վրացերէն, զոմէշներու դաշտ) ալ կ'ըսուէր:

Իբր առաւտուն ժամը տասնին Տըլիխսէն ճամբայ ելլես, գիշերուան մօտ կը հասնիս այս կողման ամենէն վտանգաւոր համարուած անցքը. անտառ մ'է, ուր ոչ սակաւ ճանապարհորդք, ինչպէս կը պատմեն, կողբապուռեցան և ձեռքերնուն պէս մերկ թողուեցան: Նաև ցորեկը, քանի մը տարի առաջ Յինանտայի Դաւիթ ճալճաւացէ իշխանին վրոյ յարձըրկեցան նոյն աւազակք, զորս փնտտելու համար՝ իր զինուորական պաշտօնն զրկած էր զինքը: Ի կախէթ բրտած առաջին ուղևորութեանս ժամանակ, գիշեր ատեն անցայ այս եղեռնաւոր անտառէս: Միայնակ իմ բերեյրառու լայնայիս մէջ, անձանօթ եսալ շիքէ (կառավար) մը վարեալ, ուշադրութեամբ բայց միանգամայն և լռիկ անհանգստութեամբ կը զննեմ ճամբուս վրայի խարչափող մացառները: Իսկ կառավարս, ազգաւ հայ, կամ իր ձեռած իրը շուտ ստանալու համար, կամ մտաք գուշակելով իմ երեակալութիւնս տատանող պատճառները, չարածնիկ հաճութեամբ մը զիս նեղել ուղեւորութեան վայրկեան կը դառնար, ծիծաղելով այս բանս կրկնելու համար. « Տէնկի, ստակ. սուլոյսայա սղանցիս, հեռի է կայարանն »: Այլ և փոխանակ փութացընելու զձիս՝ այս դժուարին սնցբիս մէջ, գոցցես աւելի դանդաղեցրնել կը ցուցընէր անոնց ողորմելի ընթացքը:

Յանկարձ կառքը կանգ կ'առնու. ապահովուպէս աւազակք են: Այս մտածութեանս հետ տեսակ մը շփոթ այլ սյուլութիւն կը կրեմ յիս, զոր ընթերցողին կը թողում պարզաբանելու հոգը: Քանի մը մանրերկրորդ կ'անցնին, որումք ինձ դար մ'երեկեցան. ապա կառավարն վար կ'իջնէ և կ'ըսէ. « Տայիդէ իւաւուրու, տուր ինձ օդի »: Պատասխանս այս եղաւ. սանձը ձեռքս առի և ամենայն արագութեամբ ձիբըր արշաւեցուցի: Յետոյ լոյս մը զարկաւ աչքիս. ենթագրեցէք՝ որչափ եղաւ մխիթարութիւնս: Վաղեց կառավարն աղաղակելով. « Վօյէ սղանցիս, ահա կայարան »:

նրն . առայդէ Առաւորքոս . սուր ինձ
օղի ք :

Սպիրտակորմ տուն մը Մուգանլուի
ամբողջ կայարանը կը կայուցանէ այս
անտաղատիս մէջ : Այս անգամ յօժա-
րութեամբ մտայ այս մենասօր կայա-
րանիս աղտեղի սրահը , ուր ցրտասար-
սուռ վիճակիս հաճոյական միտքարանք
մ'եղաւ կրակն և եռայեալ սաւնա-
վարն : Տեղոյս չային քաղցրութիւնը
տոնեղէս վերջը , այսինքն է սև հայի
մը կտոր և զեղնագոյն ըմպելիք մը ,
դարձայ առ անտղարիւն՝ որպէս զի
առաւօտուն կանուխ պէտք եղած ձիւ-
րը պատրաստէ . բայց հօն ալ գինովա-
լթենէ ընդարմացած մարդ մը գտայ , որ
հազիւ խօսքերս հասկընալու վիճակի
մէջ էր : Աւելցուր որ սենեկիս գունձ
չէր փակուեր , և մէկմէկէ քակտուած
բաժնուած պատուհանքն , ազակոյ
տեղ բազմածակ թղթերով զարդա-
րեալ էին , այնպէս որ հոլմն ուղածին
պէս կրնար մտնել : Մանաւանդ որ այս
երկրիս մէջ կլիմայն բնակաց պէս նու-
րանչան է : Հօս կը տաքնաս գեռ աղէկ
կրակի մը քով , մինչդեռ քիչ մը հեռու
արեգական ճառագայթներէն փոխչիլ
կը փնտրուես : Այնպէս որ առջի օրն 'ի
Տփլիսիս ամառուան օդ մը կ'ընէր , և եր-
կրորդ օրն 'ի Մոսկուա տեղատարափ
ձիւն կու գար : Բոլոր այս միօրինակ և
ընդարձակ դաշտային երկրիս վրայ ,
հանդէպ կախէթի լեռանց , իբրև յա-
ռաջագոյն զմտած ամենաք բնութեան
գիմապատկեր մը , սպիրտակերանք
խիտ մատակուց մը կը տիրապետէր ,
որ երկնից և երկրի միջավայրը կը
թուէր ծածկել :

Թետագոյ կայարանն՝ Սղնախ , կրե-
սուն վերստ հեռու բլլարով , որ շատ է
մէկ անգամ հանդիստ առնլու համար ,
կէս ճամբու վրայ լաքքի բտուած տե-
ղը , հաստատուած է միջանկեալ կայա-
րան մը (առսերէն թօլու-սղանօք , կէս
կայարան) , ուր միայն ձիերն կը փո-

խուին ¹ , վերջապէս նորքրիան զի զին
մէջ կը սկսի հոգն ուրիշ կերպ առնուլ .
դժուարին զառ 'ի վեր մը լեռանց գա-
ղաթը կը հանէ . յետոյ ամեն կողմանէ
կը յոճակեն բնակութիւնը՝ հանդերձ
իրենց բոլորածիր փոքր այրեստաննօք :
Հասած ենք 'ի կախէթ , վրայի արբե-
ցողաց արքայութիւնը : Կը սպասէր ին-
ձի 'ի Սղնախ նրբեղելլի իշխանն , տե-
ղոյս խաղաղութեան գատաւորն : Իր
ցուցած մարդասէր հիւրընկալութիւնն
կրկին ցանկալի եղաւ ինձի , նախ եր-
կրին վրայ ունեցած հմտութեանն հա-
մար , և երկրորդ այն անդեկութեանց
համար՝ որ ինձի պիտի կտրենար հա-
զորդել :

Բ

Սղնախ , որ ռապարտաւարան կը
թարգմանուի , կ'առնու իր անունը հայ-
կական Գարապաղ (սեւաւ պարսեզ)
գաւառին համանուն գեղէ մը , որ այս-
օրուան օրս զառուական կովկասն 'ի
Պարսկաստանէ կը բաժնէ : Պարսից հա-
լածանքէն փախտական Հայոց խմբէ
մը հիմնուեցաւ , և կը բողբոջանայ բլրոց
չարքի մը վրայ ցանուած քանի մը գեօղ-
աւաններէ , զոր Ալազանի ընդարձակ
դաշտավայրն սահմանակից մեծ դա-
րեւանգով մը կը բաժնէ : Այն դիրքն՝
զոր դալթականք իբրև սղատ համա-
րեցան լեզկիստանի և Տաղաւանի լեռ-
նակնաց յարձակումներէն , ուրիշ
կողմանէ կովկասնան շղթայով պաշա-
պանուած , լի է հիանալի անատանե-
րով : Գետն՝ որ Սղնախի բարձրուանդա-
կաց ստորուտը կ'ընթանայ , զոր կ'ըս-
տուարացընեն չորս կողմի անտառա-
խիտ լեռներէն իջած անթիւ վտակքն ,
բնաւին երբեք չի նպաստեր այս գաշ-
տացս բարեբերութեան . ծարաւի ցա-
մաքեցուցիչ հեղեղ մ'է՝ որ հապճեպ
կը խուսափէ : Միտք կայ բաժնելու զայն
քանի մի առողջանող ջրանցից , որպէս
զի դարման մ'ըլլայ այն ահաւոր չորու-
թիւններու՝ որոնք հօս երբեմն ամբողջ
տարեկան հունձքը ունայն կը հանեն :

¹ Միակ այս միջանկեալ կայարանաց բէրեւ .
լարեպան չեն փոխեր :

Սղնախէն ՚ի թեչու, սր կախէթի հին մայրաքաղաքն է, գիւղաց անընդհատ յաշորդութիւն մը կայ: Ալազան գետն, որու աղմախից տիրքն անթիւ ձկուէք կը տնուցանեն, Պարպալա¹ (Լեզկիսասան) լեռնէն կը բլլիէ, և երկիրը կտրելով հիւսարսմուաքէն ՚ի հիւսարեւեք, հսար գետը կ'երթայ կը թափի Սամուքայի մօտ (Ուբատարի խոպանն): Այս գետէս և իր մէջ թափուող Փոքր-Ալազանէն, որ նաև էօր կը կուտի (թաթարերէն կարու և կարունուրդ), առու գուռած ձորիքէն² մէկն ներքին կախէթը և միւսն արտաքին կախէթը կը ձեռադրեն: Վրաստանն ասկէց աւելի բերրի և գեղեցիկ գաւառ չունի: Մէկ կողմանէ կ'երևի կովկասն իր ցամաք և սպիտակագորգ գագաթներով, միւս կողմանէ մէկմէկու կը յաշորդեն խոտաւէտ և ծիծաղախիտ բարձրաւանդակք: Չմեռ ատեն շատ անգամ խիտ մառախուղ մը շարաթներով կը քօզա ծածկէ զձորն և իր շրջակայ բլուրները: Բայց երբ յանկարծ արեգական ճառագայթքն միզին առադատող պատուելու բլլան, ատուղի աչքն շրպեալ կը մնայ այն լուսաւոր և երփնագոյն տեսարանին փառաւորութենէն: Էրբ նոյեմբերի 1881ին ՚ի Սղնախ հասայ, Ալազանի գաւառն բարձրովն ծածկուած էր այնպիսի խիտ մառախուղ մը, որ ինձի թանձր ամպ մը երևեցաւ: Սղնախի լուսանկար մը հանած եմ, այսպիսի մառախուղով մը պատած:

Իսկ քաղաքն տխուր և ՚ի կարևորաց զուրկ տեղ մ'է. և որովհետև բազմաթիւ բլրոց վրայ է, հաղորդակցութիւնը գծուարին են. անհաւասար գետինն երևէջներով լի է, և փողպաց մէջ մի շրջագոյութիւնն իսկ բաւական է գնուցողը խնջեցնելու: Ժողովրդեան մեծ մասն Հայոց վաճառականք կը կազմեն, որոնք մէկմէկով կ'ապրին, և ծամածուռ փողոցաց խառնակութեան մէջ, որք շուկայն կը ձեռադրեն, ուրիշ բան

չի գտնուիր բայց եթէ ամենակարևոր բաներն: Բլրոց վրայ կը նշմարուին բազմաթիւ գեղեցիկ տուներ, հարուստ վաճառականաց պատկանեալք. բայց սովորութիւնն կ'ուզէ որ այս տանց գեղեցկագոյն մասերն, միայն մեծ առթով մը բացուին. միւս ժամանակը տանուտեալք աւելի սովորական և հասարակ ծառայութեյ պատշաճեալ անկիւն մը կը քաշուին: Տուներուն մեծ մասն մէկմէկու վրայ շինուած են: մէկուն առաստաղն միւսին յատակի տեղ կը բռնէ:

Իսկ ՚ի քանի մի եկեղեցեաց, գալուցաց, ատեննէ մը և զինուորանոցէ մը, կայ Սղնախի մէջ նաև ժողովատեղի մը, բայց քիչ յաճախեալ է: Տիկնայք հօն չեն երթար, ինչպէս ուրիշ կովկասու քաղաքաց մէջ, թուղթ խաղալու և կամ ծխելու համար: Արտարկագորգ պատ մը գրադարք կը պատէ երկու և կէս վերստի մակերևութի մը վրայ. այս պատս՝ զոր Հերակլ Բ վրաստանի թագաւորն կանգնած է՝ զժողովուրդը լեզկիներու յարձակմանէն բերէն պաշտպանելու համար, ճանապարհ մի ունի, որ թելու գնացող նոր ուղին կը հանէ, որ և Սղնախցոց նախամեծար ճեմելիքն է և վարազափողցն: Այս պարսպէն, որուն պատերն քիչ մը Գօրսէննը կը յիշեցնեն, պանշելի կ'երևայ ձորոյն տեսարանն, մանաւանդ լուսնի լուսով: Ամբողջ այս անգա, որ Սև ծովէն 2600 նաև 3000 անգղիական սուք բարձր է, խաղողը զարմնալի կերպով կը պրտադարերէ. գրիթէ քսան հազար ընտանիք, Սղնախի և թելուի գաւառներն մեկտեղ առած, միւսակ այս սնկոյն մշակութեան կը պարսպին: Կան այգեստանք՝ որ լայնատարր ընդարձակութիւն ունին, ինչպէս Դաւիթ Ճովճա վացէ իշխանին ցանկապատ այգին՝ Եաֆարա-Ուլի գեղին մէջ՝ Ալազանի ձախակողմեան ավանց վրայ, որ երկը հարբուր տէսիապիլէ² մակերևութի վրայ կը տարածուի:

¹ Ալազան գետի անունը գրուած են ըստ հնչման տեղացեաց: Արտարկայն աշխարհագրիք այլ յորջորջումն կու տան անոնց:

² Ուսու չափ մ'է, որ գրեթէ երկրի լծովարի մը, կամ 50 կաթի կը հաւասարի: Հարբուր տէսի-Բին՝ կ'ընէ ինն հարբուր լծովար երկրի:

Բովանդակ կատէթի մէջ, կայ ոչ ինչ պակաս քան միլիոն մի հարիւրակալ սրժտանկոյ՛ք մշակեալ երկիր, որու բերքն է երկու միլիոն եօթն հարիւր յիսուն վեաւոյ։ Սովորական տեսակին խրաքանչիւր վետրոն (որ է երկասաւան լիւր և երեք տասնորդ) կը վաճառուի հրապարակի վրայ վաժմունն քոբէքէն՝ ինչուան մէկ ու կէս ուսպլիակ ազնիւ տեսակն երկու, չորս և մինչև հինգ ուսպլ (որ է ըսել, եօթն, չորսքտասն և եօթնտասն ֆունտ)։ Այս ալ աւելցընենք, որ կայ այդեստան որու լծավոր մի գետինն կը վաճառուի երեք ուսպլիէն ինչուան երեք հարիւր ուսպլ, զարձեալ ութ հարիւրէն ինչուան հազար երկու հարիւր ուսպլ։ Կան նաև, որոնք բարեբերութեան և կամ համբաւաւոր յատկութեանց համար՝ երեք կամ չորս հազար ուսպլիով կը գնուին։

Սակայն վրացիք բնաւին հարուստ չեն. դորժէ բան չեն հասկընար. յառեւտորս՝ իրենց բնութեան մէջ եղող անգգայութեամբ և անփութութեամբ կը վարուին, և ունեցած բերքերէն օգուտ քաղել չեն գիտեր, որոց մեծ մասը Հայոց ձեռքը կ'անցնի, որ փոխատու են գրամայ։ Թող զայս, այս երկու ցեղից մէջ յարատև թշնամութիւն կայ, մինակ կարօտութիւնն է որ զիրենք կը մերձեցնեն։ Վրացին կը նկատէ զՀայն իրի անյազարար արիւն ծծող. Հայն՝ իրոխտ իր գրամադիտական առուելութեամբ և վաճառականական յարմարութեամբ, իր բռնադատ յաճախորդին՝ շինական ակնուականին տրհամար հոտ տանելութեան վրէժը կը հանէ, որչափ կարելի է ծանրադին վաճառելով նմա իր ծառայութիւնքը։

Կախէթի գինին որ Աւառսին մէջ կը կրտուի, կրնայ տասն օրէն խմուիլ։ Բաւականապէս յստակ է և ազնիւ համուսնի։ Եթէ չվաճառուի երկու կամ երեք ամսուան մէջ, և երբ պահուի ա-

ւելի ժամանակ՝ լուռ ևս գտուելու համար, այն ատեն իր առաջին հնձանէն, որ հողոյն մէջ թաղուած է, սերիչ անօթոյ մը մէջ կը փոխադրուի։ Այս գործադրութիւնս կը կատարուի նոյն կերպով՝ ինչ կերպով որ ջրհորէն ջուր կը քաշուի. շուանի մը ծայրը կախուած է զոյյի ձեով լափի մը, որ երկոտասան և կէս լիւր պարունուող անօթ մ'է, և այս կերպս՝ Եւրոպայի մէջ ջրհանով եղած փոխադրութեան տեղ կը բռնէ։ Երբ գինին վաճառուի, կը լեցընեն զայն գամչի և կամ լուռ ևս՝ եզան մարթէ և նաւթիւ օժուած տիկերու մէջ, որ անոր օտարութիւն և քիչ մը բարկ համ մը տալով սեպհական անուշահոտութիւնը կը կորսնցընէ։

Կախէթի գինին են այս նմանութիւնս ունին անգլոյս կանանց հետ, որ ժամանակի շատ չեն գիտանար, այլ շուտով կը վատթարանան։ Չեն գիտեր այս բերքին գործածութեան եղանակին լուցընելու կերպը, որ 'ի վեր է քան միւս ամեն գաւառաց գինիներէն։ Այն թրծած հողէ անօթքն, յորում կախէթի գինիներն կը պահուին, վրացերէն քուէվրի կոչուած, հարիւրէն ինչուան տասն հազար լիւր կրնան ընդունել։ Ամենէն մեծ են ինչուան չորս մեղր բարձրութիւն և երկու կամ երեք մեղր լայնութիւն ունին, և Հայտէլպէրկի տաւ կառը կը յիշեցընեն, յորում քանի մը մարդիկ կրնան լողալ և իրօք պատահարի տեսակ մ'է, որ առկայն հանդիպած է։ Այսպիսի վիթխարի քուշիներուն բարի կոյմը մաքրելու համար՝ սանդը զոյ կարօտ են։ Կան ևս անօթք՝ որոնց գինը հարիւր ուսպլի կը մօտենայ։ Ասոնք որչափ ալ հաստատուն ըլլան, կը հանդիպի երբեմն՝ որ գինին խմորման ժամանակը կը պոյթեցընէ զանոնք։

այն ատեն գետինն կ'արբենայ անոնց բովանդակած հեղուկովն, և աւերն իր սպիրտը բացած ատեն, հասէն դատ բան չի գտներ. բայց եթէ ստորերկրեայ ճայթիւնի զղորդւն մը ժամանակին չազդէ տիրոյ՞ր, որ փութալով կրնայ օշարակէն մաս մ'ազատել։

1 Վաճառու քոբէքն գրութ է երկու ֆունտը է։ Ռուսպիլի արժէքն փոփոխական է՝ ընդ մէջ երեք և չորս ֆունտի։

Գեղազդիք են որ այս անօթքս կը շինեն, և այս բանիս համար ուրիշ գործիք չունին բայց եթէ ուրք և ձեռք: Կուր կը թրեն, քանի մը օր կը թողուն որ խմորուի. յետոյ զանդուած մը կը շինեն, և բրուան կը դնէ զայն առանցքի մը վրայ չընող փայտէ սեղանի մը վրայ: Շրջկուն համեմատ գործաւորն անոր խորշը կը բռնոյ ուզած ընդունակու թեամբ: Սեղանին չորս կողմը ասխտու կամածներ կան, որոնց վրայ կը վերելակեն բրուսքն անօթոյն յօրինուածը ընցնելու համար: Երբ ձեն առած է, բաց օգու կը թողուն ժամանակ մի, ապա հողոյն երեսը բարձրացուցած փրուանց մէջ կը թրծեն, սրոնց չերմու թիւնն խիստ ուժագին է:

Նոյնպիսի կերպով կը շինեն նաև քաւցոներն, որ ջուր կրելու կուժք են, զոր և իշուն համեմտին երկու կողմը կը կախեն, ծառի ճիւղերով մէկմէկու կապած: Երբ այս կուժերն անգործածական ըլլան, այն ժամանակ տուներուն տափօրակ առաստաղին վրայ կը դնեն զայն և ծխահանի տեղ կը գործածեն: Աւերորդ է զրուցել որ մառախիկներն, յորում երկրին գանձերն ամբարեալ կան, բաղում անգամ բազմաթիւ գուղերէ կը պարպուին: Այս վերջինքս այս գործոյս համար անանկ ճարտարութիւն կը գործածեն, որ շատ անգամ տէրն լեցուն կը կարծէ իր շանմարանը. մինչդեռ արդէն ամբողջութեան մաս մը խմուած է և կամ 'ի Տիփիս կը ճանապարհորդէ:

Գ

Սլշնախեն չորս վերատ հեռու կը գրուուի այն հշակաւոր մենաստանն, ուր թաղուած է սրբուհին Նունէ, վրաստանի կոյս առաքելն¹: Քաղաքէն կը տեսնուի անոր զանգակատունն: Հօն տանող առաջին օւղին, որ օձապտոյտ կը քալէ բլրոց երկայնութեամբ, խո-

ուղներու կզերրը, սարսուռ կը բերէ. սակայն այս անպատեհաթիւն չի խափաներ զժողովուրդը, որ խուռն կը դիմէ յեկեղեցի մենաստանին, 'ի տօնի յարգելի պաշտպանի երկրին: Այս օրս հանդիսաւոր պաշտօն մը կը մատուցուի, որու ներկայ կ'ըլլան Գաւառին ամեն եկեղեցակաւք. իրենց սև և երկայն պատմուճաններն հագած և նոյն գունով միքրս մը գրած, թանձր քօղով մը և կուրծքերնուն վրայ խաչն: Մխոքս կու գայ մասնաւորապէս արշիմանտրիարն, զօրաւոր ծերունի մը, նահապետական մագերով և մորուք, որու պայծառ երեսներն մասնաւոր և հայրենապէր եռանդ մը կ'արտայայտէին երկրին սեւտտ տրոց համար: Իրեն ետեէն կու գար իր ջրագիր խումբն՝ որ են երկու գեղաչիք, որ անհրաժեշտ յաւանակը կը բերեն: Այս զարմանալի խումբս՝ նորա ձև զգեստներով անթիւ և ամեն վիճակէ մարդկան բազմութեան մը մէջէն նկարագեղ դուրս կը ցատկէր: Կարծես թէ այն հեռաւոր ժամանակը կը գրունուիք, յորում սրբուհին Նունէ կը քարոզէր կովկասու ժողովրդոց:

Այս անգամ օդն շնապատեց ուխտագնացութեան. պէտք է զրուցեմ, որ ձիւնն և մառախուղն հաւատացել լոց եռանդը պաղեցուցեր էին: Երբ օդն գեղեցիկ է, այս տօնախմբութիւնս ինչուան քանի մի հազար ժողովուրդ իրեն կը ձգէ. բայց երբ նախընթաց իրիկուներ օդաչափը ձախորդ գուշակութիւն ընելու ըլլայ, պատրաստութիւնք և պարպարանք կ'անհետանան. տեղոյս շրջագնացութեան ճեմելիքն կ'ամուսնանայ:

Թափօրը քանի մ'օր կը տեէ 'ի մենաստանն: Սմանք վրաններ կը բերեն հետերին, ոմանք եկեղեցւոյն չորս կողմի շինուածոց մէջ կ'իջևանին և կամ մօտաւոր գեղերը: Իւրաքանչիւր ոք պաշար, անկողին, երածշտական գործիք իր հետ կը շրջեցնէ. և այս ամբոխս կ'ուտէ, կը խմէ, կը պարէ, կ'երգէ՝ փա-

1 Այս մենաստանն Խանչուած է նաև Պօփոկ

անուամբ, այն արուարձանէն ուր շինուած է:

ուտորելով զորքը Նինա կամ Նունէ ('ի լատինէն Nonna, միանձնուհի, ինչպէս կը հտաւասանն) :

Մենաստանի եկեղեցիքն՝ որու շինութիւնն կ'ընծայուի վրաստանի Միհրան Ա թագաւորին, բիւզանդական խաչի ձևով է, բաւական բարձր գմբէթով մը, և արտաքստապէս բուով սպիտակացուցած, բաց 'ի զլխաւոր մտից ճակատէն և 'ի ստորե եղած ճակատէն, որոնք կապոյտ, կանաչ և սեւ գոյնուն կրդմիտարներով յարմարացուցած են, և գեղեցիկ երևոյթ մ'ունին: Պատին մէկ կողմը այս արձանագրութիւնս կը կարգացուի վրացերէն լեզուով. «Իս Գեորգ, այս եկեղեցիս նորոգել աուի, թիմուրլէնկի զվրաստանը աւերելէն վերջը » : Գերեզմանոտեղին գաւառին ազնուականաց սեփականուած է :

Սուրբ Նունէի գերեզմանն կողմնակի մատրան մէջ է՝ խաչկալին ալ կողմը. կամարակապ և սկզբած սիւներով պաղպաղունք մը՝ վեր կը բռնէ ընկուզի փայտէ ապասնը. և անոր վրան կը տեսնուի սրբուհւոյն նկար մը. իր գլուխը պսակ մը դրած և ձեռքը՝ իր մազերուն կապած՝ խաղողի ճիւղերով խաչ մը, զոր ըստ աւանդութեան աուած է Աստուածածին՝ իրեն յերուաղէմ երևեցած ատենը, պատուիրելով որ երթայ յիվերիա քարոզելու : Չորս կողմի արձանագրութիւնք խոչոյուրի (վրացի եկեղեցական գիր) լեզուով են : Վերջապէս, քուարանին սուրբ պղնձէ ճրագակալ մը կայ, ուր բարեպաշտ ընծայաբեր հաւատացեալք՝ ճրագներ կը վառեն :

Մարմինն կը գտնուի այս մահարձանին տակ խորշի մը մէջ, կը պատմեն սատր նկատմամբ, որ շերակի Բ վրաստանի վերջնութեք թագաւորն, ուզելով ապահով ըլլալ որ առաքելոյն մարմինն իրք այս ստորերկրեայ խորշին մէջ կը գտնուի, հրաման աուաւ որ անոր մտից քարերէն հանեն: Մետրապոլիան չհամարձակեցաւ իշխանին կամաց հակառակիլ. միայն հեռացաւ այն սուրբ տեղէն՝ երբ գործաւորք սկսան

աշխատիլ: Սրդ՝ բրչի առաջին հարուածին ամենքն ալ կուրացան, յետոյ երբ աշխատութենէ դաղրեցան, դարձեալ տեսութիւննին ստացան : Թագաւորն՝ որ ներկայ էր այս տեսակ մը հրաշից, ետ կեցաւ խորշը բանալէն : Արդեօք այս իրս սոնոյգ է թէ ոչ, բայց զարմանալիքն կրնայ զիրաւ մեկնուիլ. այնչափ տարիներէ 'ի վեր գրուած քարանց վրայ երբ հարուածը տրուեցաւ, խիտ փոշոյ ամպ մը հանեց որ մէկէն կուրացուց աշխատողք աչքը, փարատեցաւ՝ երբ գործիներն դաղրեցան : Աւելի արդի աւանդութիւն մը 1824 թուականին, կ'ըսէ, թէ սրբուհւոյ Նունէի մետրապոլիան ուզած ըլլայ ինքն ալ ապահով ըլլալ սրբագան նշխարաց ներկայութեան վրայ, և թէ այն օրը որ իր հրամանաւն պիտի սկսէին քարերը հանել՝ յանկարծակի մեռած ըլլայ :

Այս եկեղեցւոյս մէջ գտնուած շատ մը գամբանագ մէջէն կը յիշատակենք միայն կուլխաքով ոուս զօրավարին, որ մեռաւ 'ի 15 յունուարի 1804ին 'ի Չաքաղալոյ լեզկիներու դէմ պատերազմած ժամանակը: Թերևս ամբողջ վրաստանի մէջ՝ այս աւանդատունն է միայն որ մաքուր պահուած է, և շատ մը զիրք ունի և հին ձեռագիրներ: Պատմական իրաց նկատմամբ, կայ այն պըղընձէ խաչն՝ զոր կը կրէր ճորճացէ իշխանն՝ Քիրիլ մետրապոլիտ, երբ 'ի 22 յունիսի 1792ին լեզկիներու դէմ պատերազմի մը մէջ մեռաւ: Այս էր սովորութիւնն՝ որ եկեղացական պատուաւոր անձինք (չրօնիտէլ, արքեպիսկոպոսք) պատերազմի ժամանակ գնդից առջևէն կ'երթոյնին, և միայն պատերազմը սկսած ատենը վերջապահից մէջ կը քաշուէին և անանց զուխ կ'ըլլային :

Այսօրուան օրս Ս. Նունէի վանաց մետրապոլիտն սեզ արշիմանարիտ մը կայ. իր բնակած տունն նոր սճով շինուած, բաւական ընդարձակ է, սեւնազարդ ճեմելիք մը չորս կողմը ունենալով. մինակ անկիւնաւոր պատին մաս մը հին է և հեռաւոր ժամանակներէն

մնացած : փոյտէ փոքր կոնդիներով չի նուած է , և արուեստով մէկմէկու վրայ յարմարացուցած , անանկ որ այլ և այլ ձևեր կը ներկայացընէ : Հինգ քառակուսի բողբոջած ունի պատին վրայ պատուհանի ձևով : Այս բացուածոց վրայ կան կտոր կտոր փայտերով վանդակներով զարդեր , որոնք չէնքին դարձուցած կը բովանդակեն , և որոնց մտանակաւ առած թուի գոյնը՝ չի համաձայնիր անոնց սպիտակութեան և կողմնակի ճեմելեաց կայտառ գեղնաւ գոյն պատին հետ : Ուրիշ տնակ մ'այլ կայ քովը փոփին՝ և իւր ամուսնոյն հաւասար . այս վերջնոյս կ'իջնայ ժաման մաքրութիւնը :

Վտերքն անքնակ է . 'ի Սուրբ Նունէ ալ կրօնաւոր չկայ : Պարագ է նաև մուսուլմանին . շատ հեռուէր էին այն ժամանակներն յորում քուրդիներ , որոնց աւերակներն կը տեսնուին տակաւին չորս պատերուն մէջ , երկրիս ամենէն լաւագոյն բերքը կը պարունակէին , և յորում չորս մերձաւոր գիւղից , գաշտաց , անտառաց և այգեստանոց բերքին մաս մը ձողկեալ մենաստանին կու գոյին : Այսօր տէրութիւնն է սր ասոնց պտուղը կը վայելէ , և կործանեալ վտերքն կամաց կամաց կը կորսընցընէ իր գեղեցկութիւնը : Սակայն ոյսու հանդերձ վրտասանի պաշտպանին ոտնախօսութիւնն միշտ իր արժանապատուութեան մէջն է :

Այս տեղոյս տեսարանն դրանչելի է : Բարձր տափարակի մը վրայէն , որու կողերն զալարազարդ են . կը տեսնաս Պոսպէի և Քէտէի գիւղական տրուարձանքը , իւրաքանչիւրն շարս կամ հինգ հարիւր տաւն ունենալով . գեռ հեռ

առ կը բացուին դժուորելաննի կիրճեր , սրոնց վերին մասը Նուրբիան լեռնեղէն ձևացած է : Մենաստանին դիմացը գրեթէ ձոյն բարձրութեամբ՝ կը տարածուի Սյնտի քաղաքն , իրեն հրակայակերպ պարագոյն . հուսկ յետոյ քիչ մ'ուելի վար , Ալազանի գաւառն կը կնքէ այս կովկասեան անդեադ խողաղաւէտ և միտնգամայն վոյրնի տեսարանը :

Վտերքէն ոչ ինչ հեռու կայ տեսակ մը արբազանեալ կաղնեաց անտառ մը : Շրջակայ բնակիչք , կը կարծեն թէ ով սր ճիւղ ժը կտրէ անկէ , նայն տարուան մէջ ապահով կը մեռնի : Թերևս խորա մանդ եկեղեցական մը այս առասպելս կարկրած է , որպէս զի վանական ըստացուածքն աւաղակութիւններէն ազատ մնան : Կ'ըսեն թէ վրտասանի թաղաւոր մը , այս տեղս՝ որ մացառներէն զատ ուրիշ բան չկար , մեծ յաղթութիւն մ'ըրած ըլլալով լեզիներու դէմ , հիմակուան կաղնեաց անտառը անկած ըլլայ , և դրած եկեղեցական արգելից տակ :

Այս կոյս անտառն երկու անուն ունի . Տաւաղի-տղէ , սեպհական անտառ , և Տաղեմուղի-տղէ , սարին անտառ : Այս վերջին անունս յառաջ կու գայ անկէ , որ անտառն շրջակայ բարձրութիւններէն ցած բլրոյ մը վրայ տնկուած է : Իր նսեմատուեր ծառաստանն մերձաւոր տեղեաց բնակչաց ժողովատեղին է , որոնք ամառան օթթագին օրերը կու գան զոհելու , ոչ թէ հին եղջտաց շարաշաք աստուածոց , զոր առաջին անգամ այս լի արհաւիրք թաւուտը կը զարթուցանեն 'ի միտս , այլ ծաղրածու և զուարթագին Բաքոսի :

Էր շարսանկոնի .

1 Վրտասանի եկեղեցականք , որպէս 'ի Ռուսաստան : Երկու գաս կը բաժնուին , սգոթ է կէտեղանայն այսինքն փոխը , որոնց ներուած է ամուսնութիւն , և սեռ էկեղեցականք , որ կուսակրօն կե .

նոց պարագաւորեալ են , և իրենք միայն ամենայն եկեղեցական իշխանութեանց կրնան բարձրա նալ :